«Մեր դպրոցը, մեր բազմազանությունը» վիդեո-մրցույթի

պայմաններն ու կանոնները

Պարզեցված տարբերակ

- Սոցիալական մեդիայում մրցույթին կարելի է մասնակցել **WhatsApp, Viber App** և **Line App** հավելվածներով:
- Նախաձեռնությանը մասնակցության համար ուղարկեք ձեր 60 վայրկյան կամ ավելի քիչ տևողությամբ վիդեոն/տեսահոլովակը՝ օգտագործելով WhatsApp, Viber App կամ Line App՝ +31641644344 հեռախոսահամարով կամ ուղարկեք ձեր դիմումը videocontest@osce.org էլ. Փոստին:
- Ձեր ներկայացրած հոլովակները կտեղադրվեն արշավի կայքէջում՝ www.osce.org/our-school-our-diversity: ԵԱՀԿ-ն իրեն վերապահում է իրավունք որակազրկել մրցույթի ցանկացած դիմում՝ ցանակացած պատճառով և մասնավորապես, եթե այն պարունակում է կանոններով սահմանված կարգին չհամապատասխանող և անընդունելի բովանդակություն՝ www.osce.org/hcnm/225526:
- Երեք տեսահոլովակների համար նախատեսվում են մրցանակներ, ինչպես բնութագրված է www.osce.org/our-school-our-diversity կայքէջում:
- Վիդեո-նյութերը կարող են ուղարկվել ցանկացած երկրից:

- Բոլոր նյութերը պետք է ներկայացվեն և տեղադրվեն Creative Commons արտոնագրի ներքո (CC BY-NC-SA) https://creativecommons.org/licenses/by-nc-sa/3.0/legalcode:
- Այս նախաձեռնությունը ոչ մի դեպքում չի հովանավորվում, աջակցություն ստանում կամ կազմակերպվում WhatsApp-ի, Viber App-ի, Line App-ի կողմից, դրանց հետ չի առնչվում, և որևէ այլ սոցիալական մեդիայի:
- **Ծանոթագրություն.** Սա միայն մրցույթի կանոնների մի հատվածն է՝ ձեր հարմարության համար: Բոլոր դիմորդները պետք է օգտվեն կանոնների ամբողջական տարբերակից, որոնք հասանելի են այստեղ՝ www.osce.org/hcnm/225526

Խրախուսական մրցույթ

«Մեր դպրոցը, մեր բազմազանությունը» վիդեո-մրցույթը Ազգային փոքրամասնությունների հարցերով ԵԱՀԿ գլխավոր հանձնակատարի խրախուսական նախաձեռնություն է:

Ընտրվելու իրավունք

Խրախուսական արշավը բաց է մրցույթի ժամանակահատվածում մասնակցության պահանջներին համապատասխանող բոլոր անհատների համար: ԵԱՀԿ աշխատակիցները կարող են դիմել մասնակցության համար, բայց նրանք չեն հաշվառվի մրցանակ ստանալու համար:

Պահանջներ մասնակցության համար

Մրցույթին մասնակցելու համար, դիմորդները պետք է ներկայացնեն 60 վայրկյան կամ ավելի քիչ տևողությամբ տեսահոլովակ՝ օգտվելով WhatsApp, Viber App կամ Line App ծառայություններից՝ +31641644344 հեռախոսահամարով կամ էլ. փոստի հասցեի միջոցով՝ videocontest@osce.org (**Ծանոթագրություն.** անհրաժեշտ է ոչ թե կցել տեսահոլովակն էլ. փոստին, այլ ուղարկել հղումը, որտեղ տեսահոլովակը ներբեռնված է, **օրինակ՝ Dropbox, WeTransfer, MEGA or TransferBigFiles**): Չկան

յուրաքանչյուր անհատի և/կամ առցանց դիմումների թվաքանակի հետ կապված սահմանափակումներ: Յուրաքանչյուր օգտատեր մրցույթի ընթացքում առաջադրվում է միայն մեկ մրցանակի: Եթե տարաձայնություն է առաջանում մասնակիցների/հաղթողների առցանց մուտքի ինքնության հետ կապված, ենթադրվում է որ էլ. փոստի/ սոցիալական մեդիայի էջի (account-ի) լիազորված տնօրինողի կողմից է կատարվել դիմումը:

Դիմորդները պետք է լինեն **12-18 տարեկան** և նախօրոք ունենան իրենց ծնողների/խնամակալների համաձայնությունն այս մրցույթին իրենց մասնակցության վերաբերյալ: Այն դեպքում, եթե նրանց ներկայացված նյութը բնութագրում է այլ անձանց ևս, նրանց համաձայնությունն ու նրանց ծնողների/խնամակալների համաձայնությունը ևս պետք է դիմորդների կողմից նախօրոք ձեռք բերվեն:

Բոլոր նյութերը պետք է լինեն օրիգինալ չհրապարակված աշխատանքներ՝ պատրաստված և ներկայացված հեղինակի կողմից և չպետք է պարունակի որևէ երրորդ կողմին պատկանող նյութ, մինչև այդ երրորդ անձի կողմից նման նյութեր կիրառելու թույլտվություն չտրվի: Նյութերը չպետք է պարունակեն ԵԱՀԿ կողմից և հայեցողությամբ սահմանված ցանկացած բովանդակություն, որը՝

- խրախուսում է ալկոհոլ, ապօրինի թմրանյութեր, ծխախոտ, հրազեն/զենք (կամ վերոնշյալներից որևէ մեկի օգտագործումը)
- խրախուսում է ցանկացած գործունեություն, որը կարող է լինել անապահով կամ վտանգավոր, խրախուսում է ինչ-որ հատուկ քաղաքական օրակարգ կամ հաղորդագրություն
- անպարկեշտ է կամ վիրավորական, ընդունելի է համարում ատելության որևէ դրսևորում
- սեռական տեսանկյունից բացահայտ բովանդակությամբ, անհարկի դաժան կամ վիրավորական որևէ էթնիկ, ռասայական, գենդերային, կրոնական,

մասնագիտական, տարիքային խմբի համար կամ պարունակում է պոռնոգրաֆիկ բովանդակություն կամ մերկություն

- կրկնօրինակում է ներկայացված որևէ այլ դիմումներ
- վարկաբեկում, խեղաթյուրում է, նսեմացնում է այլ մարդկանց/ ընկերությունների/կազմակերպությունների
- պարունակում է ուրիշին պատկանող առևտրային պիտակներ, ապրանքանիշեր՝ առանց թույլտվության
- պարունակում է որևէ անձնական նույնականացման տեղեկատվություն, ինչպես օրինակ՝ համարանիշ, անձնական անուններ, էլ. փոստի հասցեներ, կամ փողոցի հասցեներ
- contains copyrighted materials owned by others (including photographs, sculptures, paintings, and other works of art or images published on or in websites, television, movies or other media), without permission;
- պարունակում է նյութեր, որոնք պատկանում են ուրիշներին (ներառյալ լուսանկարներ, քանդակներ, նկարներ և արվեստի այլ աշխատանքներ կամ պատկերներ՝ հրապարակված կայքէջերում, հեռուստատեսությամբ, ֆիլմերում կամ այլ մեդիայով)՝ **առանց թույլտվության**
- արգելված է ցանկացած համապատասխան օրենքով

ԵԱՀԿ-ն կարող է որակազրկել ցանկացած դիմում արշավի էջում հրապարակման և մրցույթին մասնակցության հնարավորությունից, եթե ԵԱՀԿ հայեցողությամբ որոշվի, որ դիմումը չի համապատասխանում այս նախաձեռնության կանոններին ինչ-որ ձևով՝ ներառյալ պարունակելով անընդունելի բովանդակություն, կամ չի համապատասխանում նախաձեռնության նպատակին: ԵԱՀԿ-ն պարտավորված չէ բացահայտելու դիմումի որակազրկման պատճառը:

Սեփականությունը/Աշխատանքների օգտագործումը

Բոլոր աշխատանքները պետք է ներկայացվեն և տարածվեն Կրեատիվ Քոմոնս (Creative Commons) կորպորացիայի արտոնագրի (https://creativecommons.org/licenses/by-nc-sa/3.0/legalcode) շրջանակում, որը թույլ է տալիս, որպեսզի ադապտացիաները տարածվեն այնքան ժամանակ, քանի դեռ ուրիշները նույնպես տարածում են և, քանի դեռ դրանք առևտրային օգտագործման նպատակ չեն հետապնդում: Մասնակիցները, հետևաբար, ԵԱՀԿ-ին տալիս են համաշխարհային, ռոյալթիներից ազատված, ենթաարտոնագրման ոչ ենթակա, ոչ բացառիկ, վերջնական արտոնագիր՝ ներկայացված աշխատանքների հետ կապված հետևյալ իրավունքներով՝ ա) մասամբ կամ ամբողջությամբ կրկնօրինակել աշխատանքը և տարածել այն միմիայն ոչ առևտրային նպատակներով և բ) արտադրել, վերարտադրել և տարածել ադապտացված աշխատանքները միմիայն ոչ առևտրային նպատակներով: Արտոնագրով իրեն տրված իրավունքներից օգտվելու ընթացքում ԵԱՀԿ-ն պետք է պատշաճ կերպով ներկայացնի աշխատանքների հեղինակներին:

Հաղթողի ընտրությունը

ԵԱՀԿ-ն կորոշի հաղթող աշխատանքները՝ հիմնվելով ստեղծագործական կարողությունների, ուղերձի փոխանցման և հնարամտության վրա: Հաղթողներն այդ մասին կծանուցվեն այն էլեկտրոնային փոստով, որով ուղարկել են աշխատանքը: **Եթե հաղթողը չի պատասխանում ծանուցմանը երեք (3) օրվա ընթացքում** և/կամ չի բավարարում նշված պահանջներին, ապա նրա մասնակցությունը կարգելվի, և այդ դեպքում ԵԱՀԿ-ն իրեն իրավունք է վերապահում ներկայացված մյուս աշխատանքների միջից ընտրել այլ հաղթողի: Հաղթողները պետք է տրամադրեն կոնտակտային տվյալներ՝ մրցանակի շնորհման համար: Այդ տեղեկությունները տրամադրելու համար հաղթողներին կտրվի հինգ (5) օր: Վերոհիշյալ պահանջները չբավարարելու կամ մրցանակի վերադարձի, կամ մրցանակի տեղ չհասնելու վերաբերյալ ծանուցման դեպքում հաղթողը պետք է հրաժարվի իր մրցանակից, որի դեպքում ԵԱՀԿ-ն իրեն իրավունք է վերապահում ընտրելու այլ հաղթողի:

Հաղթողների ընտրության վերաբերյալ ԵԱՀԿ որոշումները վերջնական են և բողոքարկման ենթակա չեն: ԵԱՀԿ-ն իրեն իրավունք է վերապահում մրցույթների ընթացքում տալ ավելի քիչ մրցանակներ կամ ընդհանրապես չտալ, եթե բացառապես իր սեփական հայեցողությամբ գտնում է, որ մրցույթի համար չեն ստացվել բավարար որակի և քանակի աշխատանքներ:

Մրցանակներ

ԵԱՀԿ-ն նախատեսում է մրցույթի ավարտին շնորհել երեք մրցանակ: Մրցանակները չեն կարող փոխարինվել, փոխանցվել կամ նշանակվել առանց ԵԱՀԿ-ի բացառիկ հայեցողության:

Մրցանակը պարունակում է միայն այն, ինչ նախատեսված է մրցանակի նկարագրության մեջ:

Դիմումների ժամկետ

2016թ. մարտի 4-ից մինչև 2016թ. մարտի 31-ի ժամը 11:59-ը (UTC+01:00):

Մասնակցի/հաղթողի կողմից պատասխանատվության ազատում

Աշխատանքը ներկայացնելով՝ մասնակիցը/հաղթողը համաձայնում է զերծ պահել ԵԱՀԿ-ին, նրա հաստատություններին, տարածքային գրասենյակներին, պաշտոնյաներին, փորձագետներին և կապալառուներին ցանկացած և բոլոր տեսակի պատասխանատվություններից մասնակցին/հաղթողին պատճառված վնասվածքների, կորստի կամ վնասի համար, որը ներառում, սակայն չի սահմանափակվում անձնական վնասվածքով, մահով կամ գույքային վնասով, որը ամբողջովին կամ մասամբ, ուղղակիորեն կամ անուղղակիորեն առաջանում է սույն մրցույթին մասնակցությունից, այդ կանոնների խախտումից կամ մրցանակին առնչվող գործունեությունից, այդ թվում՝ մրցանակի ընդունումից, տիրապետումից, օգտագործումից կամ չարաշահումից: Մասնակիցը/հաղթողը համաձայնում է լիովին ազատել ԵԱՀԿ-ին երրորդ անձանց կողմից ցանկացած և բոլոր պահանջներից, որոնք առանց սահմանափակման կապված են ԵԱՀԿ-ի կողմից նրա աշխատանքի հետ: Մրցանակների հետ կապված բոլոր հարկերը, այդ թվում՝ եկամտահարկը, առաքման հատուկ հրահանգները և մրցանակը վերցնելու հետ կապված լրացուցիչ ծախսերը հանդիսանում են մասնակցի/հաղթողի պատասխանատվությունը:

Մրցանակի ընդունումից առաջ մրցույթի բոլոր հաղթողներին կարող է ներկայացվել պարտավորությունից ազատելու մասին փաստաթուղթ ստորագրելու պահանջ: Եթե հաղթողներից որևէ մեկի 18 տարին չի լրացել, ապա կարող է անհրաժեշտություն առաջանալ, որ մրցանակի ընդունումից առաջ նրա խնամակալը ստորագրի պարտավորությունից ազատելու մասին փաստաթուղթը:

Պատասխանատվության սահմանափակում

ԵԱՀԿ-ն որևէ պատասխանատվություն կամ պարտավորություն չի կրում երրորդ կողմի տրամադրած ծառայությունների համար, որոնք ներառում, սակայն չեն սահմանափակվում էլեկտրոնային փոստի ծառայություն մատուցողներով/WhatsApp-ով/Viber-ով/Line-ով: ԵԱՀԿ-ն պատասխանատու չէ՝ 1) աշխատանքների բովանդակության համար, 2) երրորդ կողմերի կողմից մասնակցի հեղինակային իրավունքների խախտման համար, 3) աշխատանքների կորստի համար կամ 4) համակարգչային, առցանց, հեռախոսային, ծրագրային կամ տեխնիկական հնարավոր անսարքությունների համար, որոնք ներառում, սակայն չեն սահմանափակվում աշխատանքի փոխանցման կամ չփոխանցման վրա ազդող

անսարքություններով: ԵԱՀԿ-ն պատասխանատվություն չի կրում սխալ կամ ոչ հավաստի տեղեկությունների համար, որոնք կարող են լինել կայքօգտագործողների կամ սարքավորումների կամ ծրագրավորման հետ կապված կամ որևէ տեխնիկական կամ մարդկային սխալի պատճառով, որոնք կարող են տեղի ունենալ մրցույթի անցկացման ժամանակ:

ԵԱՀԿ-ն կարող է մասնակցին արգելել մասնակցել մրցույթին կամ մրցանակ շահելուն, եթե իր սեփական հայեցողությամբ այն որոշում է, որ նշված մասնակիցը փորձում է խաթարել մրցույթի օրինական ընթացքը՝ խաբեությամբ, հաքերությամբ, խորամանկությամբ կամ այլ անարդար գործողություններով կամ էլ այլ մասնակիցներին կամ ԵԱՀԿ ներկայացուցիչներին անհանգստացնելու, շահագործելու, սպառնալու կամ հետապնդելու մտադրությամբ: Եթե ինչ-որ պատճառով այս մրցույթը հնարավոր չի լինում անցկացնել ըստ նախատեսվածի, այդ թվում՝ համակարգչային վիրուսների, վրիպակների, կեղծիքների, չարտոնված միջամտության, խարդախության կամ այլ պատճառներով, որոնք դուրս են ԵԱՀԿ ողջամիտ վերահսկողությունից և, որոնք խաթարում կամ ազդում են մրցույթի անցկացման, անվտանգության, արդարության, ամբողջականության կամ պատշաճ իրականացման վրա, ապա ԵԱՀԿ-ն իրեն իրավունք է վերապահում իր հայեցողությամբ չեղյալ հայտարարել, դադարեցնել, փոփոխել կամ կասեցնել մրցույթը:

Մրցույթը որևէ կերպով չի հովանավորվում, պաշտպանվում կամ ասոցացվում WhatsApp-ի, Viber-ի կամ Line-ի, կամ էլ որևէ այլ սոցիալական կայքի հետ, որոնք օգտագործվում են մրցույթի ժամանակ:

Հրապարակայնություն

Մասնակցելով մրցույթին և/կամ մրցանակ ընդունելով մասնակիցները/հաղթողները թույլ են տալիս ԵԱՀԿ-ին օգտագործել իրենց անունը, օգտատիրոջ անունը/ցանցային ծածկանունը, հասցեն (քաղաք և պետություն), լուսանկարը, ձայնային և/կամ այլ նույնականացում, մրցանակային տեղեկությունները և/կամ աշխատանքը այսօր հայտնի կամ հետագայում հայտնաբերվելիք բոլոր լրատվամիջոցներումվ (այդ թվում՝ առանց սահմանափակման ԵԱՀԿ-ի կայքերում և սոցիալական հարթակներում/ցանցային միջոցներում):

Արտոնություններ և անձեռնմխելիություն

Սույն կանոններում պարունակվող ոչ մի բան չպետք է մեկնաբանվի որպես ԵԱՀԿ-ի և նրա պաշտոնատար անձանց արտոնություններից և անձեռնմխելիությունից հրաժարում:

Լրացուցիչ պայմաններ

Մասնակցության պահանջներով նախատեսված կարգով սոցիալական ցանցերով գովազդը տրամադրելով կամ անմիջականորեն ներբեռնելով՝ մասնակիցները/ հաղթողները համաձայնում են հետևել այդ կանոններին և ԵԱՀԿ որոշումներին, որի որոշումները վերջնական են: Այդ կանոններին չհետևելը կարող է հանգեցնել որակազրկման: ԵԱՀԿ-ն իրեն իրավունք է վերապահում մշտապես որակազրկել ցանկացած անձի մրցույթին մասնակցությունից, եթե գտնում է, որ այդ անձը դիտավորյալ խախտել է կանոնները: ԵԱՀԿ-ն իրեն իրավունք է վերապահում չեղյալ համարել, փոփոխել կամ կասեցնել մրցույթը՝ առանց ծանուցման և առանց մասնակցին որևէ փոխհատուցում տրամադրելու:

Նախադրյալներ:

Իրավաբանական առաջարկություններ http://www.convinceandconvert.com/social-media-strategy/3-ways-to-ensure-your-social-promotions-follow-the-law/